

թափուել սրբ. Գէորգ եպս Իւթիւ ճեանից. միթէ Եւրոպայի հայոց-առաջնորդ լինելն սւմ երցէ իրաւունք է տալիս հայոց եկեղեցու հիմն ական կարգերը «ալաֆրանկա» կատարելու. միթէ առաջ նորդը չպէտք է լինէ ձեռնադրուելու ժամանակ եկեղեցու նորան տուած պատուէրները, երբ նա ուխտուած է հաւատարիմ լինել եկեղեցու վարդապետութեան, նորա սուրբ Հարկրի դըրած կանոններին և ծէսերի ու արարողութեանց անթերի կատարման: «Որ քակէ զճանկ հայրենի, խածանէ զնա օձ անապատի»:

### Մ. ՆԱԼԲԱՆԳԵԱՆՑԻ ԵՐԿԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն. Նախիջևանից մեղ հաղորդում են, որ տեղւոյն Հայոց բարեգործական ընկերութիւնը որոշել է առանձին գրքերով տպագրել Ռ. Պատկանեանցի պնտիպ և Մ. Նալբանդեանցի տպած և անտիպ բոլոր երկասիրութիւնները:

### Տ. ՄԱԿԱՐԵԱՆԻ ԿՏԱԿՐ

Նորերս վախճանուած տ. Մարիամ Մակարեանը, ի միջի ալրոց կտակել է 3000 ուսուրլի հայոց դրամատիքական ընկերութեան, որպէս զի այդ գումարի տոկոսիքը իւրաքանչիւր տարի մրցանակ տրուի հայերէն լեզուով գրուած լաւագոյն դրամատիքական գրուածներէ: 1000 ուսուրլի Ներսիսեան Հոգևոր Դպրոցին չքաւոր աշակերտների համար, 1000 ուսուրլի Վերալի հայոց եկեղեցուն, որի տոկոսիքը իւրաքանչիւր տարի զատկի տօնին պէտք է բաժանուի աղքատներին, 1000 ուսուրլի Թիֆլիսի հայուհեաց բարեգործութեան ընկերութեան, որպէսզի այդ գումարի տոկոսիքով մի աղքատ աղջիկ կրթուի:

### ՂՈՒԿԱՄԵԱՆ ԹԱՆԳՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՆԳՈՒՄԵՐ

ՄԿԻՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց Մայրաքոյն Պատրիարք համաղգական նախամեծար աթոռ. Սրարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. Մնայուռն Յանձնաժողովոյ կրօնա-պատմական թանգարանի Վանաց առաջ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ:

Հիմնադիրն թանգարանիդ մեծարգոյ պ. Աւետիսն Բալայեան Ղուկասեանց գրութեամբ ծանուցեալ մեղ զվաղահաս մահուանէ երկուց պիտանի անդամոց դորին՝ Գէորգայ Եւանդուլեան և Աղէքսանդրի Նրիցեանց, խնդրէ ի տեղի նոցա նըշանակել զպ. Նիկողայոսն Տէր Յարութիւնեանց Յարոյ և զպ.

Իսահակին Յարութիւնեանց, որք ունին զբարձրագոյն կրթութիւն և լալտնի են երկարամեալ գրական արդիւնաւոր գործունէութեամբք իւրեանց:

Հաւան գտեալ ընդ առաջարկութիւն պ. հիմնադրի թանգարանիդ, սովին Հայրապետական կոնդակաւ հաստատեմք ի պաշտօն անդամութեան Յանձնաժողովորդ պա. Նիկողայոսն Տէր Յարութիւնեանց Ֆարոյ և զպ. Իսահակն Յարութիւնեանց և աղօթս առ Բարձրեալն առաքելով վասն լարատեութեան և բարդաւածման հաստատութեանդ՝ մնանք աղօթարոր

ՄԿՄՏԻՉ կաթողիկոս ամենայն Հալոց

Ի 15 մայիսի 1902 ամի

և ըստ տոմարիս ՌՁՄԲ

Ի Հայրապետութեան Մերում թ. ամի

Վրարատեան Մար Աթոռ ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

թ. 728.

### «ԻՎԵՐԻԱՆ» ՀԱՅՆՐԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի քաղաքային իրաւասուների ընտրութիւնները այս տարի նորից բնւ դուրս բերեցին հալկա-վիրական լարաբերութիւնների խնդիրը: Բանն այն է, որ վրացիների մի ստուար մասը չի ուզում հաշտուել այն անլազթելի դրութեան հետ, թէ ներկալ ժամանակում տնտեսական խնդիրներում ուժը պատկանում է այն դասակարգին, որը տնտեսապէս աւելի ընդունակ և աւելի աշխատասէր է: Վրացի չովինիստները կարծում են, թէ Թիֆլիս քաղաքը լինելով մի ժամանակ Վրաստանի մայրաքաղաք, աժմ էլ տնտեսապէս պէտք է պատկանի վրացիներին: Հալը իբրև թէ պատմական իրաւունք չունի այնտեղ նիւթապաւ իշխելու, մինչդեռ իշխում է: Ինչո՞ւ առևտուրը հայերին ձեռքին է, ինչո՞ւ կալուածքների ստուար մասը նրանց է պատկանում, ինչո՞ւ վերջապէս քաղաքային խորհրդի անդամները մեծ մասամբ հայեր են:

Ահա այս մտնկական հարցերից կազմելով մի խոշոր հալկա-վրական հարց, վրացի ազգամոյները բարձրացրել են մի դրօշակ, որի վրայ գրուած է տկար մատներով: «Պէտք է հայերին հեռացնել ասպարէզից»: Ասուած է, պիտի կատարուի Դրոշակը ցցուած է օրից օր աւելի ու աւելի վրաց հասարակութեան խոհուն մասի աչքում ընկնող «Իվերիա» անունով լրագրի խմբագրատան ճակատին: Այդ լրագիրը իւր հարատեցութիւնը այն աստիճանի է հասցրել, որ այսօր ճիգն է անում ապադուցանել, թէ Վրաստանում երբէք հայեր չեն եղել, թէ ալժման հալոց վանքերը Թիֆլիսի նահանգում պատկանելիս են եղել վրացիներին, թէ ալժ նահանգի հայերի մեծ